Արձանագրություն N 20/2-3

«ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 19 դեկտեմբերի 2019թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Ա. Պետրոսյան,
Գնահատող անդամ (ԳԱ)՝	Մ. Գյուլումյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Վարդանյան, Հ. Գյուլումյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ)՝	Ա. Բաղրամյան

1. ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ - 20/2 ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ

(Ա. Պետրոսյան)

1.1 ՔԵՆԴԼ – ԳՀԾՁԲ - 20/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախորդ նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով. հանձնաժողովը ընդունել էր որոշում. դիմել մասնակից «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հայտը ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և ներկայացրել հանձնաժողովին:
Ընդունվել է որոշում՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ի հայտը գնահատել բավարար, կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ մասնակիցների կողմից բավարար գնահատված հայտերում ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

(Ա. Պետրոսյան)

Չափա բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակցի առաջարկած գինը (առանց ԱԱՀ), ՀՀ դրամ				
		Մասնակիցների անվանումը				
		«Ֆիլյոր» ՍՊԸ	«Պահապան 1»	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	«Պահապան Գրուպ» ՍՊԸ	«Սպեցնազ» ՍՊԸ
1	Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայություններ	5 663 900	4 800 000	6 585 600	5 868 000	6 000 000

3. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ

(Ա. Պետրոսյան)

Տվյալ գնման ընթացակարգը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար անհրաժեշտ է առաջարկված գների նվազեցման նպատակով հանձնաժողովի նիստում **բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ.** ընդ որում՝ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը **մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:**
(Բանակցությունների վարման կարգի ամբողջական նկարագրությունը՝ Հրավերի 1-ին մասի 8.7 հոդվածում):

Հանձնաժողովը որոշեց՝ **Որոշում N 20/2-3**

ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-20/2 ընթացակարգի բոլոր մասնակիցներին ս.թ. դեկտեմբերի 23-ին, ժ. 12:00-ին հրավիրել (ՔԵՆԴԼ ՍՀԻ հիմնադրամի՝ ք. Երևան, Աճառյան 31 հասցեի 207 սենյակ) միաժամանակյա

բանակցությունների՝ ձեռք բերվող «Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայությունների» մրցույթի **<u>ընտրված մասնակցի որոշման</u>** նպատակով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արմեն Պետրոսյան

Անդամներ՝ _____ Միքայել Գյուլումյան

_____ Աշոտ Վարդանյան

_____ Համլետ Գյուլումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արծրուն Բաղրամյան